ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի փետրվար ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2021 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,829.9 մլն դրամ՝ պլանավորված 2,600.0 մլն դրամ ցուցանիշը կատարելով 8.8 տոկոսով կամ ավել 229.9 մլն դրամով:

Փետրվար ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 1,805.9 մլն դրամ՝ պլանավորված 1,625.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 11.1 տոկոսով կամ 180.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 75, լուծարվել՝ 16 տնտեսավարող սուբյեկտ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 38 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 32-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 4-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման ու 2-ը՝ լուծարային:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 10,180 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 9,816:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 33 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում փետրվար ամսում կատարվել է վերադարձ 38 վարձու աշխատողի՝ 6.0 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 17 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ՊԵԿ նախագահի հրամանով հաստատվել է ««Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» օրենքի կիրարկման հետ կապված հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման մասին» հրամանը և

փոփոխություններ կատարվել հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման (ֆիսկալավորման) ու ֆիսկալային հաշվետվությունների դուրս բերման պատասխանատուների ցանկերում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2021 թվականի հունվարի 1-ից հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները հարկ վճարողներին իրազեկելու նպատակով ԱՀ ՊԵԿ նախագահի 2021 թվականի փետրվարի 17-ի N 23-ն հրամանի համաձայն՝ փետրվարի 23-ին կազմակերպվել է սեմինար-խորհրդակցություն:

Ուսուցողական դասընթացներ են կազմակերպվել նաև ՊԵԿ անձնակազմի համար:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները, այդ թվում՝ ներկայացվել պարզաբանումներ՝ օրենսդրական փոփոխությունների, կազմակերպությունների և վարձու աշխատող ունեցող անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի վերաբերյալ:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել թվով երկու հայտարարություն:

Փետրվար ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 356, ելքագրվել՝ 101 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն, որից 2-ը՝ էլեկտրոնային եղանակով: